պապրութեանց Սուրբ Աթոռոյդ՝ մեծապէս շնորհակալու. եղիցի Կուսաւորութիւն մեր զՀէնչ։

Յուսամ թէ ընկալեալ իցէ Տէրութիւն Ձեր զհինգ աշխարհագրական քարտէզս՝ զոր առաքեցի. յորժամ աւարտեալ իցէ տպագրութիւն քարտէզացն Կիյպերտի (Kiepert) զայսոսիկ եւս յղեցից Դերապայծառութեանդ՝ վասն զի այսոքիկ լաւագոյն եղիցին քան զայս ամենայն։

Մատուցանելով՝ի խորոց սրտէ զոյժ ջոյն մեծարանացն և սիրոյ Ձերում մեծապայծառ Տէրութեան և մեծապատիւ միաբանից Սրբոյ Աթոռոյդ կամ և մեամ Ձերում Դերապայծառութեան,

Խոնարհ ծառայ
H. Petermann

Ի Բերլին 16 Յուլ. 1872.

ԱՌ ՓՈՒՆՋՆ

Թէ Արդարանէն առ ձեզ զկուսած և Փունջի 729 թուոյն մէջ հրատարակուած նամակի պարունակութիւնն և թէ՛ ձեր հակիրճ դիտողութիւնն, երկոքեանն եւս խիստ արդարոյ էն և իրարու համապատասխան։

Ի՞նչ ընտիր փորձ մի է այս դէպքը ձեզ համար, որ զգոյշ կենաք ստէպ գահավէժ դատողութենէ։ Մի թէ դէպքերը ցոյցն Պատասխանեն ձեր բազմաբնէպ դատողութեանց։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Յունիս 30 ին Սուրաբա կուսակալ բաշան Յոսպէ հասաւ. ծովունեղերքը երկու ոչխար մորթեցին՝ի պատիւ նորա գալստեան. և Ամսոյս 1 ին Ուէմիէ հասնելով մինչեւ հետեւեալ օր երեկոյ հոն անցուց. և 3 ին յանակնկալս Երուսաղէմ հասաւ։ Նոյն երեկոյ քաղաքի բնակիչք հրադարձութեան հանդէս կատարեցին՝ի պատիւ նորեկ Կուսակալին։

Յուլիս 8 ին Երուսաղէմէն մեկնեցաւ նախկին Կառավարիչ Ռեամիլ Փաշան։

Ամսոյս 11 ին Պոլիսէն եկած հեռագիրը կիմացնէր Աքքէին և Նապլուսին Երուսաղէմի Կուսակալութենէն բաժնուիլը։

Տեղւոյս Կուսակալն եւս հեռանգրով իր պաշտօնէն հրաժարեցաւ։ Մինչեւ յարդ դեռ պատասխանն եկած չէ։

Ամսոյս 6 ին Երուսաղէմացի 18 տարեկան միամոր Յոյն ջրեպան մը Յոպպէի ծովուն եղերքը ձին լուալէն յետոյ. ինք եւս ծով կը մտնէ. բայց դժբաղդութեամբ կընկղմի եւ անյայտ կըլլայ։ Շատ հետախուզութիւն ըրած էն դիակը գտնելու, բայց՝ի զուր։ Մինչդեռ դիակը գտնողին մէկ ոսկի տալ խոստացած է Ռեթզեհեմի Յունաց առաջնորդ Դեր. Եպիսկոպոսը։ Ամ նոյն միջոցին Յոպպէ կը գըտնուէր։

Ամսոյս 27 ին հինգշաբթի օրը Ամենապատիւ Տ. Տ. Եղիազար Ս. Պատրիարք Հօր անուան տարեդարձի ուղնախմբութիւնն ըլլալով՝ փառաւոր հանդիսիւ կատարեց միաբանութիւնս։

Սուրբ Պատարագէն վերջը հանդիսիւ և շարական երգելով հանդերձ միաբանութեամբ, ժողովրդօք և քաղաքիս պատուաւոր անձանց հետ բաղ-

digitised by A.R.A.R.@

մուԹեամբ եկան 'ի պատրիարքարան , այն տեղ ժառանգաւոր աշակերտք երգեր երգեցին , և պատրաստուած ճառեր կարդացին ։ Ճառ կարդացող աշակերտներն էին . Ա. Կարապետ Տ. Յովհաննէսեան Թորակցի Հայերէն , երախտագիտուԹեան վրայ . Բ. Պողղիարէն , Յովհաննէս Խաչատուրեան ՄալաԹեացի . Գ. դարձեալ Հայերէն Կարապետ Մկրտիչեան Եւդոկեացի . օրուան պարագայից վրայ . և Դ. Ս. ՈւխԹոյս միաբան աւագ Սարկաւագ Տ. Կարապետ Տէր Մինասեան՝ գեղեցիկ ու սրտառուչ ոտանաւոր մաղԹանք մի կարդաց . որոց պատասխանեց Նորին ՍրբազնուԹիւնը , օրուան հանդէսը առիԹ առնելով ըսաւ , Թէ այն հանդէսը որ ամեն տարի կը կատարէ Միաբանական ուխտս , ոչ այլ ինչ է , բայց եԹէ հոգեւոր ուրախուԹիւն և առիԹ սիրակցուԹիւն , այն հանդէսը սեպհական չէ միայն ինձ . այլ կը վերաբերի բովանդակ ՄիաբանուԹեանս , ուստի այս տօնախմբուԹիւնն ալ ՄիաբանուԹեան տօնախըմբուԹիւնն է ։

Յայտնեց նաեւ , որ այս հանդէսը ամեն տարի կատարելով՝ տարեգլուխ մը կը սեպուի . այսպիսի աւուրց մէջ պէտք է յիշենք , որ մեր կեանքէն տարի մը եւս պակասած է , ուստի հարկ անհրաժեշտ է , որ քննենք զմեզ եւ տեսնենք Թէ իւրաքանչիւրնիս մեր բաստանձնած պարտքերնիս կատարած ենք . Թողունք որ ամեն մարդ՝ իբրեւ մարդ պարտաւորուԹիւններ ունի առ Աստուած , առ անձն և առ ընկերս , այլ նաեւ Ս. ՈւխԹս իբրեւ Ազգին մէկ պատուոյ նաւը մեզ յանձնուած է բարուԹեամբ լի , այս նաւուն մէջ ամեն ոք իւրեանց պաշտօնն ու պարտքերն ունին , նաւուն ապահովուԹիւնը բոլոր պաշտօնէից մտուԹենէն և պարտակատարուԹենէն կախում ունի . ուստի իւր պաշտօնը պակաս ձգողը պարտազանց է և պատասխանատու նաւուն վտանգին ։

Արդ՝ պէտք է մտածենք այս բանին վերայ , եԹէ մենք ամենքնիս ալ մեր պարտքերը կատարած ենք , անշուշտ վարձքը պիտի ընդունինք , զոր պատրաստած է Աստուած . իսկ եԹէ չենք կատարած , արդէն իսկ դատապարտեալ ենք իբր պարտազանց ։

Յետոյ յորդորելով զամենքը եւ օրհնելով Ազգն ու ՄիաբանուԹիւնը , իւր շնորհակալուԹիւնը յայտնեց եւ վերջացուց ։

Այս երեկոյ եւս ՄիաբանուԹեան սեղանատունը պարկեշտ ու չափաւոր հացկերոյԹ մի պատրաստուած էր , ուր յատուկ հրաւիրուած էին քաղաքիս պատուաւոր Ազգայիններէն ոմանք ։ Խիստ կանոնաւոր և վայելուչ էր ըստ ամենայնի այն հանդէսն ալ . հոգեւոր և սրտառուչ մաղԹանքներ կը բարձրանային առ Աստուած , ամեն սիրտ համակուած էր քաղցր բերկրուԹեամբ , և յաւարտ ընԹրեաց նոյն ուրախուԹեամբ , երգովք և շարականօք գնացին 'ի պատրիարքարան և անդ մեկնեցան ամենքեան իւրեանց տեղը ։